ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ
22 հունվարի 2024 թվական

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2024 թվականի հունվարի 22-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահ	Լիլիթ Թադևոսյանը
Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	Խաչատուր Պողոսյանը
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ	Աննա Վարդապետյանը
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ	Արա Մկրտչյանը
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ	Պարույր Հովհաննիսյանը
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ	Սիմոն Բաբայանը
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» նախագահ	Արթուր Սաքունցը

Նիստն արձանագրում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի արձանագրային բաժնի մասնագետ Լիլիթ Սիրադեղյանը:

Ա. Դիլանյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հարցերը:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Օրակարգային 1-ին հարց. թեկնածուների ընտրություն անցկացնելու մասին հայտարարության տեքստը հաստատելու հարցը:

Հայտարարության տեքստի վերաբերյալ առաջարկություններ ներկայացրին Հանձնաժողովի անդամներ Լիլիթ Թադևոսյանը, Խաչատուր Պողոսյանը, Աննա Վարդապետյանը, Արա Մկրտչյանը, Սիմոն Բաբայանը, Արթուր Սաքունցը և Հանձնաժողովի նախագահ Ա. Դիլանյանը:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝ հաստատել թեկնածուների ընտրություն անցկացնելու մասին հայտարարության տեքստը՝ հաշվի առնելով հանձնաժողովի անդամների առաջարկություններն ու դիտողությունները, որը վարչապետի աշխատակազմի միջոցով կհրապարակվի 2024 թվականի հունվարի 23-ին զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների, Հայաստանի Հանրապետության Կառավարության, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կայքերում:

Օրակարգային 2-րդ հարց. ընտրությանը անգլերենի և ֆրանսերենի մասնագետներ ներգրավելու համար թեկնածություններ ներկայացնելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին դիմելու հարցը:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝ դիմել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ ընտրությանը ներգրավելու համար անգլերենի և ֆրանսերենի մասնագետների թեկնածություններ ներկայացնելու նպատակով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **Արման Դիլանյան** **[ստորագրված]**

Լիլիթ Թադևոսյան **[ստորագրված]**

Խաչատուր Պողոսյան **[ստորագրված]**

Աննա Վարդապետյան **[ստորագրված]**

Արա Մկրտչյան **[ստորագրված]**

Պարույր Հովհաննիսյան **[ստորագրված]**

Սիմոն Բաբայան **[ստորագրված]**

Արթուր Սաքունց **[ստորագրված]**

Արձանագրող՝ Լիլիթ Սիրաղեղյան **[ստորագրված]**